Ե. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 27 ՓԵՏՐՎԱՐ 1902 — ԹԻՒ 395

K. P. Kalemcarian, Mechitharistengasse N. 4
(Autriche) Vienne

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ
Պուլկարիոյ համար տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար Տարեկան 15
Վեցամսեայ 8
Ամերիկայի համար Տարեկան 3 դոլ.
Վեցամսեայ 50 »
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԸ
Տանուցման տողը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեքեն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կրյայ։
Վառնայի համար ձեռքի 10 սանթիմ

ՇԱՐԺՈՒՄ

Համակ. հասցե՝ ղրկել հետևեալ հասցեին։
—
Редакция на вѣстникъ
Шаржумъ
Варна
Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)
—
Տարեկան հատորի տրուած
Արտասահմանի ձեռքի
)(20 ՍԱՆԹԻՄ)(
Պուլկարիոյ համար ձեռքի
≍ 15 ՍԱՆԹԻՄ ≍

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱԲԱԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

☛ ՇԱՐԺՈՒՄԻ ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ ☛

ԾԱՆՈՒՑԱՐԱՐՈՒԹԻՒՆ

—o—

Մեր բաժանորդներէն մէկ մասը չը նայած մեր յայտարարութեանց, իրենց պարտքը չը ճանչցան, ու դեռ կը շարունակեն թերթ ստանալ։

Այդ անպարտաճանաչ ծանօրդներուն ժամանակ կուտանք մինչեւ փետրուար վերջ. ու այնուհետեւ պիտի յայտարարենք անունները. իսկ Պուլկարիոյ մէջ չը վճարող բաժանորդներէն օրէնքի դիմելով պիտի գանձենք։

Շարժում միշտ ղրկուած է ով ուզած է. ոչ ոքի առանց ուզելու, մանաւանդ նոր խմբագրութեան միջոցին, թերթ չէ ղրկուած, եւ այդ ուղողներուն բոլոր նամակները պահուած են.

Բաժանորդները թող հասկնան որ խմբագրութիւնս թուղթի, մարքայի, տպարանի, գրաշարի ստակ կը վճարէ, և երբ իր բաժանորդները իրենց չնչին պարտքը չեն վճարեր, խմբագրութիւնը ահագին պարտքերու տակ կիյնայ, թէ ինք կը ՀԱՍուի, և թէ իրեն հետ դրամի գործ ունեցողները։

Ա՛Լ ՄԻ՛ ՈՂԲԱՐ

Աւերակաց մէջը նստած մեն մենիկ,
Զորս դիդ նախկին փառաց փշրանք ցիրուցան,
Ա՛լ մի՛ ողբար, ո՛վ իմ քաղցր Հայրենիք,
Զաւակներդդ զէնքը սիրել սորվեցան։

Զորս դիդ նախկին փառաց փշրանք ցիրուցան,
Հերիք բաղդին դաժան կամքին անսացիր,
Զաւակներդդ զէնքը սիրել սորվեցան,
Պիտի չուտով ծագի արեւ կենսատիր։

Հե՛րիք բաղդին դաժան կամքին անսացիր։
Սրբէ՛ արցունք, թօթուէ՛ չղթայ ուժգնօրէն,
Պիտի չուտով ծագի արեւ կենսատիր։

Քու վեհապանծ, կանանչազարդ լեռներէն։

Սրբէ՛ արցունք, թօթուէ՛ չղթայ ուժգնօրէն
Հերի՛ք մաշիս տառապանքով լուռ, տրխուր։
Քու վեհապանծ, կանաչազարդ լեռներէն
Ժամէ թող ա՛լ թնդայ, ցոլայ որոտ, հուր։

Հերի՛ք մաշիս տառապանքով լուռ, տրխուր,
Աւերակացը մէջը նստած մեն մենիկ,
Ժամ է թող ալ՝ թնդայ, ցոլայ որոտ, հուր։
Ա՛լ մի՛ ողբար, ո՛վ իմ քաղցր Հայրենիք։

ՎԷՏԱ

ՄԻ ՓԱՍՏ

Ազատական թուրքերի համաժողովին մասնակցել են երեք պատգամաւորներ „ԴԻՕՇԱԿ"ի խմբագրութեան կողմից, երեք պատգամաւորներ Վերակազմեալ Հնչակեանների կողմից և երկու հոգի էլ Պարիզաբնակ հայերից՝ պ. պ. Զերաղ և Կ. Բասմաճեան։

Մեր երկու յեղափոխական մարմինների ներկայացուցիչները, նախ քան թուրքերի ժողովին մասնակցելը, իրենք միասին մասնաւոր նախապատրաստական ժողովներ են ունեցել. համաձայնութեան եկել և ապա մասնակցել։

Թուրքերի ժողովի մէջ երկու չէզոք հայերը՝ պ. պ. Զերաղ և Բասմաճեան յայտարարել են որ իրենք ամեն կէտում համաձայն են հայ յեղափոխական մարմինների ներկայացուցիչների հետ։

Ուրեմն, մենք տեսնում ենք որ կարեւոր պարագաներում մեր տարբեր յեղափոխական մարմինները, և չէզոք, բայց իսկապէս հայի ազատութիւնը կամեցող և նրա համար աշխատող հայերը կարողանում են միանալ և արտայայտել հայ ժողովրդի պահանջները։

Մենք տեսնում ենք որ երբ միասին գործելը անհրաժեշտ է, երբ կարելի է համաձայնութեան յանգել, թէ մեր տարբեր կուսակցութիւնները, թէ ազատասէր չէզոք հայերը կարողանում են և կարող են միանալ, միատեսակ մտածել, միատեսակ պահանջել, և միատեսակ գործել։

Հրաւիրում ենք մեր ժողովրդի ուշադրութիւնը այս տեղի ունեցած կարեւոր փաստի վրա և խորհուրդ տալիս նրան արհամարանքով վերաբերվել դէպի այն փողոցային միութիւնականները, որոնք միութիւն են քարոզում միայն իրենց դատարկ գլխի անտեղի պահանջներին բաւականութիւն տալու համար։

Հանգամանքից օգտուելով, յայտարարում ենք որ միութեան այն պռոշտուքները, որոնք լոյս են ընկնում մութ անկիւններից, գործ են զանազան մութ, փարա չարժող անձնաւորութիւնների, որոնց գլխաւորները ժողովրդի հոգեկան հիւանդ խաւերի ներկայացուցիչներն են։

ՎԱՐԴՕ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Մուշ, 10 Յունվար 1902

Սիրելի ընկեր,

Մեր անտանելի կացութեան հանդէպ Առաջնորդարան շատ և ապդու բողոքագիրներով 'ի Պատրիարքարան դիմաց, գոնէ մասամբ մը մեղմացնելու հայ ժողովրդեան գլխուն եկած չարիքներն։ Բայց աւա՜ղ, պատրիարքարան այդ բողոքագիրներու ամբողջ շարքն ղրօյի չափ նշանակութիւն չը տալ է ի զատ, անամօթաբար շատ և շատ անգամներ ալ խիստ և կծու լեզուաւ յանդիմանագրեր գրելով յառաջնորդարան, կը հրամայէր որ կառավարութեան կողմն բռնելով, մինչոցներ ձեռք առնու հայ յեղափոխականներն հարուածելու։ այն անձնուէր յեղափոխականները՝ որոնք որ իրենց էն թանկագին կեանքն հայրենեաց ազատութեան ու ժողովրդեան պաշտպանութեան համար նուիրած էին, այդ տեսակները որիկայ անուանելով։

Միեւնոյն ժամանակ ալ կըստիպէր առաջնորդին ու քաղաքական ժողովոյն որ կառավարութեան օգնութեամբ ժողովրդեան խաւերու մէջ մանելով, հայ ժողովուրդն եւս գրգռել ափ մը կուսակցութիւններու հանդէպ, որ այդ տեսակ սուտ ու ապատ միջոցներով եթէ կարելի է ձերբակալեն ու կառավարութեան յանձնեն, մի միակ ապահովութեան միջոցն ու դարմանն ատորմով կրնայ առաջ դալ կըսէր։

Անդրանիկ որ պատահմամբ Առաքելոյ վանք կերթայ, թիւրք կառավարութիւնը լս լով վանքի չորս կողմը կը պաշարէ. ու մի և նոյն ժամանակ ալ Բ. Դուռը կը հեռագրէ, արտօնութիւն ստանալու վանքն ոմբակոծելու համար. Բ. Դուռը լսելուն պէս, իր սարուկ Օրմանին խնդիրն նոյնութեամբ պարզելէ յետոյ, Անդրանիկը վարպետութեամբ մը ձեռք բերելու խնդիրն իրեն կը ձգէ, որ իբրեւ հայոց պատրիարքը համոզել յանձն առնու, ողջ կառավարութեան ճանկը ձրգելու համար։

Օրմանը՝ Բ. Դռնէն իր հրահանգներ ստանալով, շուտ ընդ փոյթ Մշոյ առաջնորդարան կը հեռագրէ, որ միջնորդական տէրն ստանալով, Ջանան Անդրանիկին համոզելու յանձնատուր ըլլալու համար։

Նախ առաջնորդարան այսպիսի սուտ և ապատ միջոցի մը դիմելուն պժկամակեցաւ, բայց վերջն շատ խիստ տրուած հրահանգներու ու կառավարութեան ճնշման վրայ յակամայից հարկադրուեցաւ ընդունել, որով Առաջնորդարանի կողմէ Առաքելոց վանքի առաջնորդին հրամայուեցաւ թիւրք գօմիսէրի

ու երկու փոլիսի հետաք վանքը երթալ ու բանակցութեան մէջ մտնել, յուսալով որ Անդրանիկն պիտի համակերպի իրենց ամէն մէկ առաջարկին, երբէք չը մտաբերելով յեղափոխականի այն ուխտն, որ երբ առաջին օրէն իւր քայլն կը դնէ այդ փշոտ ճանապարհին մէջ, այնպիսի անառ է որ, մինչեւ իւր վերջին շունչը զէնքը վար չը դնել, մինչեւ որ հայրենիքի անկախ ապատութիւնը ձեռք չը բերէ։

Պատգամաւորները՝ վանք կը մտնեն մեծ յուսով իրենց Խ. Դրան ու Պատրիարքարանին Անդրանիկի մասին ծրագրուածներն իրագործելու դիտումով, բայց անկարելիութեան բախուելով կորագլուխ դուրս կելլեն։

***

Ռուսճուք, 22 փետր. 1902

Ամեն անգամ որ հարկ կրլլայ տեղւոյս ազգային ու կրթական գործերու մասին գաղափար մը տալ «Շարժումի» պատուարժան ընթերցողներուն, միշտ հարկադրուած կրլլամ արխուր ու սրտմաշուք իրողութիւններով գրաղելու։

Եւ արդէն թղթակցի մը պարտականութիւնն է ձաղկել, վեր հանել բոլոր այն թերութիւնները որոնք կրնան ապագային վնասաբեր դառնալ։

Ամանորէն սկսեալ կրկին խաղամոլութեան ախտը իր բոյնը դրաւ Հայկական ընթերցարանին մէջ. բայց այս անգամ՝ անոր զոհերը դպրոցական աշակերտներ եղան. ամեն օր Ազգ. դպրոցէն ու կիմնազիայէն խառն հայ տղաքներ դասագրքերնին անուն նուն տակ. զոյգ զոյգ կը շարուին սեղաններու շուրջը ու կսկսին խաղալ. կը խաղան ժամերով . . . մինչեւ որ կէս գիշեր ըլլայ, օր չի անցներ որ առանց կռիւի վերջանայ այդ աշխատութիւնը. ծնողքին այնպէս հաւատացուցած են թէ իրենք այդ տեղ լրագիր եւ կամ գիրք կարդալով կը զբաղին. մինչդեռ խեղճ ծնողները չեն գիտեր որ այդ յարկին տակ իրենց զաւակները հապար ու մի աղտոտ ու անվայել արարքներու մէջ ընկղմած թանկ ժամերնին թղթախաղով կը մոռցնեն։ Անկարելի է տեսնել ասոնք ու չի զգածուիլ, անկարելի է տեսնել ապագայ սերունդը անբարոյականութեան տիզմին մէջ թաղուած ու չի արդահատիլ. ասոնք որ տակաւին կեանքի խանձարուրն են, այժմէն իսկ բարոյապէս մեռած տեսնել՝ յիրաւի ցաւալի է։ Ցաւալի է նոյնպէս սա ալ թէ ի՞նչու ուսուցչական մարմինը աշակերտաց դպրոցէն դուրս նիստ ու կացուլ չի հետաքրքրուիր։ Մենք այնպէս գիտենք թէ, դաստիարակի մը պարտականութիւնը ո՛չ միայն դպրոցէն ներս է, այլ դպրոցէն դուրս ալ անիկայ կոչում ունի ազգային մանկտոյն բարոյականութեան վրայ հսկելու։ Այս առթիւ մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրեմ ուսուցչական մարմնոյն որ քանի դեռ վերքը տաք է միջոցներ ձեռք առնուի դարմանելու համար։

Կարժէ այստեղ մի քանի խօսք ալ ընել տեղւոյս Հայկական ընթերցարանի նկատմամբ։ Ընթերցասրահին կից սրահը որ այժմ խաղարանի տեղ կը ծառայէ եւ որուն եկամուտը հաստատութեանը գանձուն չի պատկանիր կը հարցնեմ պատ. վարչութեան միթէ՞ լաւ չէր ըլլար որ քակուէր առանց իսկ ընթերցարանի պիւտճէին ամենաչնչին վնաս մը պատճառելու. որով այն ատեն թէ մոլութեան աղբիւրը ցամքած պիտի ըլլար եւ թէ ընթերցասրահի մէջէն ազդուկը վերցած՝ որ շատ տեղ ընթերցումը անկարելի կընէ։ Եւ երկրորդ՝ անցեալ տարի շաբաթը երկու օր ընթերցասրահը իսկական տեսին կը յատկացուէր որ ասոնց բաւական թուով յաճախողներ կը գտնուէին այժմ ի՞նչու վերցուեցաւ այդ օրէնքը։ Կնիկներն ալ ոչ նուազ պէտք ունին ընթերցանութեան, նամանաւանդ որ այստեղ մայրենի լեզուն նոր սկսած է ընտանեկան յարկերու մէջ գործածուիլ։ Լա. պիտի ըլլար եթէ նախապաշարմունքը մէկդի դնելով շարունակէին այդ գեղեցիկ գործը։

Անցեալ ամսու մէջ պատուելի Փէորքեանց Կարնոյ երկրաշարժի հայ արկածեալներուն համար դրամ հանգանակեց. տեղացի ջոջերէն շատեր չի մասնակցեցան այն ազնիւ ձեռնարկին առարկելով թէ՝ իրենք ալ մտադիր են մօտերս հանգանակութիւն մը բանալու։ Այդ օրէն մինչեւ հիմա երկու ամիս կընէ որ բան մը բրած չեն. այնպէս կերեւի թէ ընկլիք ալ չունին ճիշդ սա առաջի նման—մինչեւ որ հարուստին կամքը ըլլայ, աղքատին հոգին կելլէ. չեմ գիտեր թէ ո՞ր օրուան կսպասեն։ Եթէ գրութեանս մէջ մխիթարութեան արժանի կէտ մը կայնէ, այն ալ խումբ մը երիտասարդներու ջանասիրութիւնն է. մեծ պակին մէջ պիտի ներկայացնեն ժամանակակից յեղափոխական կեանքէ թատերգութիւնը՝ Պանք—Օթոմանի դրաւումը։ Հասոյթը պիտի յատկացուի Պէտոի գրութիւնները հրատարակելու գործին. թէպէտեւ իրենք իրենց մէջ այդ նպատակին համար հանգանակութիւն մը ըրին, սակայն եւ այնպէս Պէտոն եւ իր ընկերները արժանի են տեսնելու նիւթական ու բարոյական զոհողութեան։ Յաջողութիւն։

Նժդեհ

ԽՈՀԵՐ ՎԱՐԴԱՆԱՆՑԻ ԱՌԹԻՒ

Թղթակցութիւնս ամփոփանձնուած միջոցին, արդէն անցած պիտի լինի բարեկենդանի հինգշաբթին ու, շատ չը տեւած, մտնելու արձագանգ պիտի տայ հանդէսներու. իրարանցումներու, հայրենասիրական պարբերական վերազարթնումներու. այն օրը ո՞վ գիտէ որչափ ճառախօսներ մրցած պիտի լինին իրարու հետ, մէկզմէկ գերազանցելու համար, բայց մի միայն գեղեցիկ շարադրութիւններու կրակոտ նախադասութիւններու մէջ։ Մանկական թոթով լեզուներ, երիտասարդական կորովի ձայներ. ծերունի դողդոջ շրթունքներ ամենը միահամուռ պիտի դրուատեն Վարդան Վահաններու եւ Ցովսէփ-Ղեւոնդներու սուրբ յիշատակը իսկ անէծքներ տեղացնեն Վասակ-Սուրմակներու։

Հակառակ չեմ հանդէսներու. ընդհակառակը կը սիրեմ յարգել մեծ Մարդոց մեծ գործերը, սակայն ո՞րչափ դառն է երբ մարդ մտածելու ըլլայ թէ մեր հանդիսականներու գրեթէ երեք չորրորդ մասը անմահ բանաստեղծին նկարագրած հայրենասէրներուն պէս ամէն ազնիւ ձգտումներու բաղձացող են և նոյն իսկ հիացող. միայն այն պայմանաւ որ, իրենցմէ ամենաչնչին զոհողութիւն մը իսկ չը պահանջուի։ Հարկ չը կայ մինչեւ Ե. դարը եւ երթալ, այսօրուան վիճակնիս աւելի տխրազդեցիկ է. այն տեսնի ժողովուրդին թէ հոգեւոր և թէ մարմնաւոր ներկայացուցիչները իրենց դէմ միայն և միայն պարտիկը ունէին և ստրկութեան մահաբեր թմրութիւնը ժողովուրդին ծուծը թափանցած չէր. առաջին հրաւէրով իսկ 66 հազարներ թափեցան Շաւարշան. թշնամիին դէմ զէնք պարզելու և այդ սրբազան մարտին մէջ ինկողներու յիշատակը տաան և հինգ դարերէ ի վեր, ամենայն ակնածանօք կը տանէ Հայ ազգը։

Փոխանակ մի միայն անցեալին վրայ զմայլելու քիչ մ՚ալ ներկան քննենք. այսօրուան մեր հայրենիքի վիճակը աւելի զարհուրելի տեսարաններ կը պարզէ մեր առջեւ. իւր ազգատուր ձայնէն նոյն իսկ օտարներն ի գութ չարժեցան, հիմայ ալ հայրենիքի հարազատ զաւակներ Վարդանի վեհ սիրտը կրող հայորդիներ, արհամարելով կեանքի բոլոր վայելքները, հայրենասիրական աւելի Մարդասիրական վեհ գաղափարներով աւելցուն թշնամիին դէմ անհաւասար կռիւ կը մղեն որչափ ճառախօսներ մրցած պիտի լինին իրարու հետ, մէկզմէկ գերազանցելու համար, բայց մի միայն գեղեցիկ շարադրութիւններու կրակոտ նախադասութիւններու մէջ։ Մանկական թոթով լեզուներ, երիտասարդական կորովի ձայներ. ծերունի դողդոջ շրթունքներ ամենը միահամուռ պիտի դրուատեն Վարդան Վահաններու և Ցովսէփ-Ղեւոնդներու սուրբ յիշատակը իսկ անէծքներ տեղացնեն Վասակ-Սուրմակներու։

Հակառակ չեմ հանդէսներու. ընդհակառակը կը սիրեմ յարգել մեծ Մարդոց մեծ գործերը, սակայն ո՞րչափ դառն է երբ մարդ մտածելու ըլլայ թէ մեր հանդիսականներու գրեթէ երեք չորրորդ մասը անմահ բանաստեղծին նկարագրած հայրենասէրներուն պէս ամէն ազնիւ ձգտումներու բաղձացող են և նոյն իսկ հիացող. միայն այն պայմանաւ որ, իրենցմէ ամենաչնչին զոհողութիւն մը իսկ չը պահանջուի։ Հարկ չը կայ մինչեւ Ե. դարը եւ երթալ, այսօրուան վիճակնիս աւելի տխրազդեցիկ է. այն տեսնի ժողովուրդին թէ հոգեւոր և թէ մարմնաւոր ներկայացուցիչները իրենց դէմ միայն և միայն պարտիկը ունէին և ստրկութեան մահաբեր թմրութիւնը ժողովուրդին ծուծը թափանցած չէր. առաջին հրաւէրով իսկ 66 հազարներ թափեցան Շաւարշան. թշնամիին դէմ զէնք պարզելու և այդ սրբազան մարտին մէջ ինկողներու յիշատակը տաան և հինգ դարերէ ի վեր, ամենայն ակնածանօք կը տանէ Հայ ազգը։

Փոխանակ մի միայն անցեալին վրայ զմայլելու քիչ մ՚ալ ներկան քննենք. այսօրուան մեր հայրենիքի վիճակը աւելի զարհուրելի տեսարաններ կը պարզէ մեր առջեւ. իւր ազգատուր ձայնէն նոյն իսկ օտարներն ի գութ չարժեցան, հիմայ ալ հայրենիքի հարազատ զաւակներ Վարդանի վեհ սիրտը կրող հայորդիներ, արհամարելով կեանքի բոլոր վայելքները, հայրենասիրական աւելի Մարդասիրական վեհ գաղափարներով աւելցուն թշնամիին դէմ անհաւասար կռիւ կը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՀԱՍԿԱՆԱԼԻՆ

ՄԱՍ III

ԳԼՈՒԽ Գ.

Հաւար, անձրեւոտ գիշեր էր. եթէ մէկը փողոցով անցածդ միջոցին մատը աչքդ կոխէր, չէիր տեսնիլ։

Վանը ընկղմված էր մեռելային լռութեան մէջ. քրիստոնեա և մահմետական ամենքն էլ անձնատուր էին եղել ամեն ինչ մոռացնել տուող քնին. միայն մի տան մէջ դեռ արթուն էին. այդ տունը Վահէի և իր ընկերների թագստոցն էր։ Մեր հայդուկ զինակիրները պատրաստվում էին այդ գիշեր Վանից դուրս գալ, Պարսկաստան վերադառնալու համար։

Թագնոցում՝ բացի ասն տէրերից գտնվում էին և ուրիշ համակիրներ. երիտասարդներ, հարսներ և օրիորդներ. նրանցից ամեն մէկը ջան-ֆէտայիների համար ճամբու պաշար էր բերել. որը հաց, որը պանիր, որը իւղ, որը ծխախոտ, որը միս։ Վահէն և ընկերները զէնքերը մաքրել և պատրաստել էին. հրացանի խողովակները աղոտ լոյսի մէջ պլպլում էին. մի երկու փոքրիկ տղաներ երբեմն ուղղվում էին դէպի զէնքերի կողմը իրենց փոքրիկ ձեռքերով չօշափելու, անզգայաբար շոյելու այդ մահաբեր գործիքները որոնց միջոցով միայն՝ հայը պէտք է ազատվի իր բռնակալ դահանից։

Մայրերը տղաներին արգիլում էին զէնքերի հետ խաղալ, սարսափով վազում էին փոքրիկներին ետ քաշելու զէնքերի մօտից. Վահէն միջամտում էր ասելով.

— Թողէք. թողէք այդ փոքրիկները այժմեանից սովորեն զէնքի հետ խաղալ. նրա փայլով զարճանալ։ Ինչի՞ էք վախենում. նրանք այնքան ուժ չունեն որ կարողանան բլթակները շարժել։

Վերջապէս երբ ամէն ինչ պատրաստվեց, Վահէն ասաց ներկաներին.

— Էհ, բարեկամներ, կարծեմ ժամանակ է ճանապարհ ընկնելու. իմ և ընկերներիս կողմից մեր անկեղծ ու ջերմ շնորհակալութիւնները ձեզ ամենքիդ էլ։ Մեր այնքան նեղութիւններով և վտանգներով ձեզ հասցրած զէնքերը լաւ պահեցէք։ Սիրեցէք այդ զէնքերը, ձեր զաւակների պէս։ Նոյն իսկ աւելի, որովհետեւ դրանցով է որ դուք պէտք է կարողանաք պաշտպանել ձեր կեանքը, ձեր օճախը, ձեր պատիւը։ Մտաբերեցէք որ մինչեւ այդ զէնքերը ձեզ հասցրինք, մենք մի ընկերոջ կեանք վրա տուինք, հիմա վերադառնալիս. Աստուած ոչ անի, կարելի է կրկին զոհ տանք։ Այդ զոհերը արժէք պէտք է ունենան միայն այն դէպքում, եթէ դուք զէնքերը գործածէք և կարողանաք ձեզ պաշտպանել։ Ամենանեղ պարագայում անգամ թշնամուն չը յանձնէք նրանց. աւելի լաւ է ջարդել, փշրել քան թէ թշնամուն յանձնել։

Թշնամուն յանձնելը նշանակում է մեր ձեռքով նրանց գինել մեզ կոտորելու համար։

Ցետոյ խօսքը ուղղելով ուղեցոյցին շարունակեց.

— Դէ, կարօ, առաջ ընկի՛ր. դուք էլ տղէք, իմ ետեւից մէկ մէկ եկէք. դաշոյններդ և ատրճանակներդ պատրաստ. հրացանները լաւ պահեցէք որ չը թրջվեն։ Զարուխներիդ կապերը լաւ կապեցէք. որպէսզի չը քանդվեն և ոտքերիդ տակ ընկնելով վար չընկնէք։

Վահէն նեղկաների ձեռքերը սեղմելով ուղեցոյցի ետեւից դուրս եկաւ, ընկերները նրանց հետեւեցին. կիները սկսեցին աղօթքներով բարի ճանապարհ մաղթել և արտասուել։

Տղայքը շարունակեցին հարբաքայլ ընթանալ. ուղեցոյցը յանկարծ կանգ առաւ չչընչալով, — ոտքի ձայն եմ լսում, ոստիկան պէտք է լինի։

— Վնաս չունի, շարունակիր պատասխանեց Վահէն. տղէք արագ քալեցէք, առանց ձայնի։

Մի քիչ էլ առաջ անցան—մի՛ ձայն եկաւ—ո՞վ է.

— Օտարական չէ, պատասխանեց ուղեցոյցը, և քայլերը արագացրեց։

Նրանք հասան գիշերապահին. գիշերապահը նախ չարեց յետոյ ուզում էր ձայնել, երբ մի ակնթարթում, Վահէի դաշոյնը խրվեց նրա ձախ թեւի տակը։ Վահէն դաշոյնով չը բաւականանալով, գիշերապահի կոկորդը մի լաւ սեղմեց ու կրկին անշշուկ ճանապարհը շարունակեցին։

— Անպիտան, չըշնչաց Վահէն, ինչ պարտաճանաչ գիշերապահ է նեղկ. այս վատ եղանակին կրկին իր տեղից չի հեռացել. եթէ ամենքն էլ այսպէս լինեն, ուրեմն մինչեւ քաղաքից դուրս գալը մենք մի քանիսի գլուխը պէտք է ուտենք։

(Շարունակելի)

—(][)—

մղեն, սակայն աւա՜ղ որ այն ատենի ժողովուրդին ազատութեան համար զոհողութեան ոգին կը պակսի՝ ի մեզ, մենք բոլորովին մեղկացած, մեր վայելքներէն մէկ ժամ նոյն իսկ զատուիլը մեզ սոսկում կ՚ազդէ, շատ շատ հաւակրող ենք մի միայն խօսքով և եթէ պատահմամբ ո և է Ազգ. յեղափոխական կուսակցութեան մը քանի մը սանդիմ վճարած ըլլանք, մեր զոհողութեան չափը լիովին կատարած ըլլալ կը կարծենք։

Իսկ մեր մէջէն ինքզինքին յէզոք յորջորջող սուտաւ մեծամտութիւն մը, ամէն ժամ պատրաստ է, յեղափոխական կուսակցութիւնները դատափետելու պատգամներ որոտալու։ Միութիւնը իրեն դիմակ տուած երկպառակութեան խրատները աւելի ընդլայնելու։

Ամեն ազնիւ ձեռնարկներու մէջ իբր թէ յոռի կողմ մը գտնելով յաղթականօրէն այն կողմին վրայ յարձակելու. մէկ խօսքով անիկայ հայրենիքի ցաւերով կը ճենճերի. արցունքը միշտ աչքը պատրաստ ունի. վայ բերան բուի մը պէս միշտ ողբացող. պայմանաւորը մէջը նիւթական կամ ֆիզիքական զոհողութիւն չ՚կենայ։ Ճշմարիտ գործիչները իր աչքին դեւ կերեւին, որովհետեւ անոնք իրենց ստանձնած զկսբունքի պահանջին համաձայն, պարտաւորուած են այդ կարգի կեղծ հայրենասէրները դիմակաթափ ընելով ժողովուրդը զգուշացնել թէեւ բաղդին մէկ քմահաճոյքովը այդպիսիները խմբագիրներ, գրագէտներ կամ ոսկւոյ դէղերու տէրեր եղած լինին։

Բայց, հայրենակիցներ Հայրենիքի մէջ կռուող ուժերը առանձին են արիւնաներկ բռնակալին դէմ։ Ո՞ր հայ երիտասարդ սրտի անհուն հրճուանքով մը չը կարդայ ներկայ ժամանակին կենդանի Վարդանին—Անդրանիկի—բանակցութիւնը թուրք բռնակալին պատուիրակներուն հետ, ո՞ր պիսի գոհունակութեան սփոփիչ հառաչներ չը խլեց մեր սրտի խորերէն այդ իսկապէս քաջարի խմբապետին աներկիւղ ու վեհանձն պատասխանը, իր առջեւ խոնարհող բռնապետի ներկայացուցիչներուն դէմ։ Տեսէք այն լիրը բռնապետը, որ Մարիցայի արիւնոտ ափերուն վրայ, ձեռքերնին ոտքերնին կապ չոր, եըիտասարդները կախաղան կը բարձրացնէր, առանց խղճի խայթ մը կամ երկիւղ մը ղգալու. Եւրոպայի քթին տակ. հոն արեան ճապաղիքներու մէջ լողացող հայրենիքի խոր անկիւններէն մէկը սարսափած կը խոնարհէր Ջան-Ֆէդայիի զէնքին առջեւ, կուզէր ամէն գնով խուսափիլ անոր վրէժխնդիր չեչտակի հարուածներէն. իրաւ է թէ շատ թոյներ կար պահուած իր որտին խորը այդ յանդուգն «կեաւուր»ներուն դէմ, որ կը յանդգնէին, իր ռիկ մնջիկ դահճութեան դերին մէջ զինքը անհանգիստ ընել, եթէ կարելի ըլլար ձեռք ձգել, տարբեր լեզուով կը խօսէր անոնց հետ, սակայն անոնք անզէն չէին։

Ուրեմն չը ձգենք այդ առիւծները սահմանափակ թուով, Արտասահմանի մէջ շաղբաղբո թեան ժամանակ անցած է. արիւնուայ հայրենիքի խորերէն, Անդրանիկներու ձայնը զմեզ կը կանչէ. թուչինք անոնց քով, ամէնքս մէկ հաւասար կռիւ մղենք ու մեր սեփական հողին վրայ ասենք մեր հին ու նոր պաշտելի անձնուէրներու. յիշատակը։

Ա. Ո.

ԱԶԳԱՅԻՆ ՋԵՑԵՐԸ

Թշնամին՝ արիւնխուն Համիտն ու իր վոհմակը՝ Հայը ընկճելու՝ ոչնչացնելու համար իր յարձակումը գրրսէն կրնէ։

Մեր ներքին թշնամին, «ազգային ցեցերը»—անոնցմէ ներկայիս մէջ մեզի անմիջական վտանգ սպառնացող հակայեղափոխական ու կղերական վոհմակը—մտած է հայուն մարմինը, հայուն սիրտը. կը կրծէ ներսէն, կրսպաննէ անոր կենսատու ուժերը, հոգ պատրաստելով միեւնոյն ատեն արտաքին թշնամիին։

Պատմական ժամանակներէ ի վեր մեզ շրջապատող արտաքին եւ ներքին սա երկու զօրաւոր թշնամիներն ալ մէկը միւսէն աւերիչ, մէկը միւսէն մահաբեր եղած են ու պիտի ըլլան։

Երկուքէն ո՞րն է սակայն աւելի վտանգաւորը։

Պատասխանը պարզ է...

Բայց իրողութիւն է որ մեր երկու թշնամիներն ալ դուլ-դադար չունին, մէկը միւսէն ճարպիկը ու եռանդուն իրենց մահաբեր գործը առաջ տանելու կաշխատին։

Ու հայ ժողովուրդը անանկ դրութեան մը մէջ է որ, ստիպուած է իր ուժերը կրկնապատկել, կռուիլ երկուքին դէմ ալ հաւասարապէս. բոլորովին չի տուժելու համար ուշ կամ կանուխ։

Շատ գրուած է, շատ խօսուած է, իսկապէս ժողովուրդին շահը, օգուտը մտածող մեր արտասահմանի մամուլին մէջ կղերական եւ հակայեղափոխական աւերիչ տարրին՝ վրայ։

Փիլ անգամ սակայն ԼՍՈՒԱԾ է անկեղծ, ճշմարիտը։

Որովհետեւ նոյն ատ տարրին մէջէն, սկսած ամենաթրքացած խմբագիրներէն մինչեւ ամենախորամանկ օձերը, ժողովուրդին հետ աչքկապուկ խաղալու ելած են. կը պաշտպանեն ինքզինքին անոնք՝ այն անունին ապաստանելով, այն անունին—յեղափոխութեան եւ ժողովուրդին օգուտին—ուժովը, որը տապալելու համար ճամբայ ելած են ազգատ ցեցերը։ Փորձուեցէք հարուածել մեր ազատ տարրին մէջէն ամենէն վատը, ու պիտի տեսնէք որ, մեր թրքացած խմբագիրները, անոնց արբանեակ ցեցերը, մանրով, մենծով չորս ոտքով դէմ պիտի վազեն պաշտպանելու համար սա ամենաազատ ու ամենավտանգաւոր տիպերը...։

Ու սա վլվլուկին մէջ է որ, միամիտ ամբոխը շատ անգամ չէ կրցած լսել ու հասկնալ անկեղծն ու ճշմարիտը։ Ու ճիշդ ատիկա է որ պէտք է կրկնէ, մի՛շտ կրկնէ ժողովուրդին բարեկամ մամուլը։

* * *

Աչքի առջեւ ունեցէք մեր կղերական ամբողջ զանգուածը. աչքի առջեւ ունեցէք մեր բոլոր հայ կեդրոնները—Թուրքիէն մինչեւ Կովկաս, Կովկասէն մինչեւ Եւրոպա, ուշադրութենէ չի վրիպեցնելով Ամերիկան՝ իր մէջ սնուցանող մեծ փոր վարդապետներովը, բողոքականութենէ դարձած կէս—մարդ պատուելիներովը. Ռիզմանեան՝ «Շարժումի» մէջ հրատարակուած օտարացած ու խաչագոյ տէր-պապաներու ցանկով, վերջապէս Պուլկարիան՝ իր ցնթած հովիւներովը ու գլնով եւ խառնակիչ ագիտէրներովը. պիտի դժուրանաք լաւերուն թէր երկուքէն չորսի բարձրացնել։

Ամեն տեղ, ամեն ժամանակ, սոսկալի տդէտ մը, ցնթած մը, անբարոյական մը. որ ունկարող է իր հայր ճարելու, աչքը չորս կը բանայ «փիլոն» մը ձեռք ձգելու համար։ Դիր եպիսկոպոսի մը ձեռքը 8–10 հատ կարմրակ ոսկի, վաղը ուսփարա չարժող ատ սուկալի ագէտ, անարժանը, ժողովուրդին հովիւն է, անոր առաջնորդողը...։ Մեր կղերականութեան մէջ սիրող ասդրութիւնը՝ կամաց կամաց սկսած է բողոքական պատուելիներուն եւ կաթոլիկ վարդապետներուն բերնին ջուրն ալ վազցնել, որոնցմէ ատրուան մէջ մէկ երկու հատ հայ եկեղեցին իր ծոցը ընդունելու երջանկութիւնը՝. կունենայ։

Սկիզբէն մինչեւ հիմա, մեր կղերին մէջ՝ լաւերը, ազնիւները շատ աննշան թիւ մը կազմած են, որոնք ըմբռնած ըլլան ժողովուրդին օգուտը, անոր համար բաբախէ իրենց սիրտը, դիտակից ըլլան ժողովուրդին եւ ժամանակին պահանջներուն։ Ասանկներու պէտք է բացառութիւն կամ տարբեր դասակարգ մը սեպել, մնացածները. առանց խղճաբուելու ջուրն ի վար տալու համար։

Ու ասոնք սակայն է որ ներողամիտ աչքով չենք կրնար նայիլ զարգացած կարծուած այն երիտասարդ խմբագիրներուն՝ որոնք կաթողիկոսական կոնդակէ մը չլացած չորս-հինգ լաւերով ամբողջ կղերական անցեալն ու ներկան լաւ գոյներով կը նկարագրեն։

Հայ հաւայնքներ, որոնց ամեն միջոց ունին առաջդիմելու, զարգանալու, հետաքրքրուելու իր ազգին ներկայով ու գործնապէս աշխակցիլ անոր, կը տեսնենք որ ոչ մէկ ջանք, ոչ մէկ ճիգ ընելու տրամադիր չեն. կռիւներու, աղատ ու անազնիւ կը ոիւներու մէջ կը թապլակին։ Փնտռեցէք ու կղերին եւ անոր շուրջը դարձող սինլքորներուն մասը պիտի գտնէք։

Տեղ մը՝ երիք տարեկան տղան է որ իր տէրտէր-հօրը կիրքերուն ծառայելու համար կամուսնացուի։

Ուրիշ տեղ մը խեղճ որբն է որ կը ղերին աղտոտ ու անասնական կիրքերուն զոհ կըլլայ...։ Մարզուանի որբանոցին մէջ պատահածը չի կրնար յոռցուիլ։

Եւ ի՞նչ պատիժ կը յուսայիք թէ տնօրինուէր Աւետարանի այդ քարոզիչին.—տարուան մը փիլոնապրկութիւն։ Սարսափելի չէ՞ք գտներ։

Բայց այս պատիժը տնօրինողն ալ կղերն է, անշուշտ իրրեւ քաջալերութիւն ուրիշներու...։

Մեր կղերը, իր չորնալիք գլխովը, դիտէ ամբոխին զգացումները ուզածնուն պէս քաշքշել։ ամենէն խաղաղ համայքները խռովել։ Տգէտ փառասիրութիւնը—ծածկուած եկեղեցիին օրէնքները պահպանելու քօղին ներքեւ—պիտէ մեր կղերը առաջ տանել, ատով ժողովուրդին աչքին թոզ փչելով միեւնոյն ատեն։

Այս ինչ բանը, եթէ մեր վեղարաւորներուն «քէյֆը» ուզէ, եկեղեցական օրէնքը չարգիլեր, նոյն բանը, ուրիշ ատեն մը նոյն եկեղեցիին օրէնքը կարգիլէ, որովհետեւ ատանկ կուզէ կղերին «քէյֆը»։

Հայ եկեղեցին օրինակի համար, կրնայ հոգեհանգիստ, մաղթանք կատարել օտար ազգի եւ օտարազգաւան իշխաններու եւ իշխանուհիներու համար. մինչեւ իսկ կը թոյլատրէ պատերը, սիւները սեւերու մէջ առնել։ Որովհետեւ ասանկ կուզէ մեր կղերին «քէյֆը», եւ օրէնքը չարգիլեր։

Բայց ահա՛ Հայր Ալիշանը, հայ ապրած, հայ մեռած ատ պաշտելի Նահապետին մեռած մարմինը։ Ահա նաեւ հայ ժողովուրդը. որ կուզէ իր վերջին յարգանքը նուիրել իր սիրելի Նահապետին։ Վրայ կը հասնի ոակայն կղերը։ Ալիշանի «բապուճ»ը չարժող վարդապետը. հայ եկեղեցիին օրէնքով՝. կարգիլէ հոգեհանգիստը։ Փիչ մը եաքը անոր կը ձայնակցի հայոց Հայրապետը իր հեզինակաւոր ձայնովը...։

Դեռ երեկ օտարներու համար հոգեհանգիստ ընելը չարգիլող հայ եկեղեցին, այսօր իր դռները հայ Նահապետին առջեւ կը փակէ։ Ինչու։—որովհետեւ կղերին ֆանաթիքութիւնն ու «քէյֆը» ատանկ կուզէ։

Մինչնադարեան մոլեռանդութիւնը վերսկսեր է պիտի ըսէինք, եթէ հարիւրաւոր օրինակներ չի տար մեզի պատմութիւնը, թէ՝ հայ եկեղեցին անցեալին մէջ, անոր օրէնքները գրծողներուն օրովորքա՞ն ազատ եղած է։

(Շարունակելի)

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կարգադիր մասնախումբս իր եւ Ազգ. երկսեռ վարժարանաց հոգաբարձութեան կողմանէ խորին շնորհակալութիւններ կը յայտնէ այն պատուաւորժան հայ եւ օտարազգի անձնաւորութեանց որոնք չրզլացան իրենց լիաբուռն նուէրը Ազգ. վարժարանաց ի նպաստ կազմակերպուած պարահանդէսին առթիւ ու ամեն անոնց՝ որոնք սիրայօժար ըստանձնեցին երեկոյթին կատարեալ յաջողութեան օժանդակել ու պարասրահին զարդարանքին չքեղութեանը նպաստել։

Նաեւ շնորհակալութիւն այն երկու ծպտեալ Օրիորդներուն որոնք նոյն գիշերը սիրուն ակնկալներով մանաւոր գումար մը հաւաքեցին եւ ընդհանուրի հիացման առարկայ եղան։

Այս առթիւ պարտք կը համարինք նաեւ ներկայացնել հասարակութեան պարահանդէսի հաշիւը որ հետեւեալն է։

ՄՈՒՏՔ

	Ֆր. սնդ.
200 տոմսերէ	1000.—
7 Օթեակներէ	56.—
Ճաղիկներէ	82.—
Գոնֆէթիէ	80.80
Օշարակ ծախող Օրիորդէն	82.—
Բաղդաթուղթ վաճառ. զէն	141.—
Նուէրներէ	41.90
	1356.70

ԵԼՔ

	Ֆր. սնդ.
Նուագախմբին	95.—
Սալոնի ծախք	20.—
Նուագուծուց ոմտելիք	18.—
200 բաքէթ գոնֆէթի	24.—
Տոմսակներու եւ այլի տպագրութեան	21.—
Նամակագրոշմ եւ ճահար.	2.60
Մոմի. թելքի. քօքարտի եւն	20.—

Փոխադրութեանց ծախք	11.50
Ապառիկ մնացած տոմսակ	24.—
Պատրաստ դրամ	1102.60
	1356.70

Վասն ճշգութեան կստորագրենք
Անդամք Կարգադր մասնախմբի
25 փետրվար 1902
Վառնա

ՀԱՇՈՒԵԿՑԻՈՒ

Ի նպաստ Ռուսճուքի Ազգ. երկսեռ վարժարանաց տրուած պարահանդէսին 16 փետրուար 1902 շաբաթ գիշերուան

—օ—

Ներկայիւս ձեզ կը ղրկեմք ի նպաստ Ազգ. երկսեռ վարժարանաց տրուած պարահանդէսին հաշուեկշիռը. խնդրելով որ բարեհաճիք զայն հրատարակել յօյնութեամբ, ձեր պատ. լրագրին մօտակայ թիւերէն միոյն մէջ.

ՄՈՒՏՔ

			Ֆր. Ս.
4	անձ	20էն	80.—
1	«	15էն	15.—
16	«	10էն	160.—
1	«	5, 20էն	5, 20
35	«	5էն	175, —
4	«	4էն	16, —
52	«	3էն	156,—
1	«	2էն	2 ,—
1	«	1էն	1, —
400 հատ վիճակահանութեան տոմս			400, —
Քօրնեններու վաճառում			47 ,50
Մաղկի վաճառում			44, —
Հանդերձ պահելու համար			13 ,30
			1115.05

ԵԼՔ

Տպագրութեան, նամակ. դրօշմ.	44.80
Նուագախումբի	59.90
Հինութիւնք	25.—
Զանազան պիտոյք	25.25
Մաքրութիւն դպրոցի	20.20
Աշխատողներու	29.35
Քառնէններու պատրաստութիւն	32.40
Փոխադրութիւն	2.80
Կոտրածներ	6.15
Վիճակահանութեան նիւթի համար Տիկնանց խնամակալութեան	36.—
Զուտ շահ.	833.10
	1115.05

Հոգաբարձութիւնս իր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ այն ամեն մեծարոյ ազգայնոց՝ որք իրենց վիճակահանութեան նիւթերը եւ անոնցմէ ոմանք՝ իրենց ձեռնտուութիւնը չը զլացան պարահանդէսը փայլուն եւ արդիւնաւոր ընելու համար:

Ի դիմաց
Հոգաբարձութեան Ս. Մեսրոպեան եւ Ս. Հռիփսիմեանց Ազգ. վարժարանաց
Վ. Ատենադպիր   Վ. Ատենապետ
Գ. Ասլանեան   Վ. Գույումճեան
25 փետրվար 1902
Ռուսճուք.

Ծանօթ.—Մուտքի տոմսակի գինն էր 3 ֆրանք

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Մարտ 3էն Բերայի արհեստանոցին մէջ պիտի սկսին կիրակնօրեայ մանկավարժական դասախօսութիւնները, զորս պիտի ստանձնեն Պէրպէրեան, Կուրտիկեան և Կարապետեան.

— Սամսոնի առաջնորդ Աշոտ եպիսկոպոս հեռագրով պատրիարքարանի իմացուցած է թէ կընդունի կաթողիկոսական ընտրութեան համար իրեն յանձնուած պատուիրակութեան պաշտօնը.

— Պուլկարիոյ Սլիվէն քաղաքի մէջ եւս հանգանակութեան սկսեր են Պետրոս Աճէմեանի աշխատութիւններուն հրատարակութեան համար.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Ռուսիոյ, Իտալիոյ, Ֆրանսայի և Անգլիոյ դեսպանները հաւաքական յիշատակագիր մը տուեր են Ի. Դրան, որով կը բողոքեն այն դժուարութիւններուն դէմ որ Թուրք իշխանութիւնները կը հանեն Կրէտացիներու հանդէպ անցագրերու և արդարութեան վերաբերեալ խնդիրներու մէջ.

Մակեդոնիոյ մէջ կրկին ձերբակալութիւններ սկսուած են.

Կառավարութիւնը արգիլեր է հայոց դպրոցներու մէջ հայոց պատմութեան ուսուցումը. պատրիարքը բողոքեր է և Պատրիարքարան չի երթար.

— Էրզրումի նահանգին հայերը Ռուսիայէ կը խնդրեն Կովկաս գաղթել, քիւրտերէն և թիւրքերէն գալիք վտանգներէն ազատուելու համար.

Եւրոպական թերթերը կը հաղորդեն որ Մուշի և Սասունի կողմերը հայերը ապստամբելու կը պատրաստուին.

— Պոլսոյ մէջ նոր ձերբակալութիւններ տեղի ունեցեր են.

Ծովային վարժարանի 40 աշակերտներ ձերբակալուեր են. Իշխանաց կղզիներու մէջ ձերբակալուեր են Նասիմ և Շաքիր փաշաները.

Այս բռնակալական գործերը սարսափելի յուզումն և վախ առաջ բերած են Թուրք ժողովուրդին ամեն դասակարգերուն մէջ.

—Անցեալ օրը ոստիկանները ֆրանսական փօստայի շինութենէն դուրս ձերբակալեր են ամեն ցրուիչները, տարեր են Բերայի ոստիկանատուն, լրագիրները քններ են, թան լրագիրը գրաւեր են և ապա ցրուիչները ազատ ձգեր են.

— Թուրք իշխանութիւնները լուր կը տարածեն որ Պօրիս Սարաֆովը Մակեդոնիոյ մէջ կը գտնուի և ժողովուրդը ապստամբութեան կը պատրաստէ. Իբր թէ արդէն քանի մը խմբեր ներս մտցուցած է.

ՌՈՒՍԻԱ

Ֆինլանտիոյ մէջ քանի մը լրագիրներու հրատարակութիւնը արգիլուած է, որովհետեւ Ռուս կառավարութեան Ֆինլանտիոյ հանդէպ բռնած ընթացքը քննադատեր են.

ՖՐԱՆՍԱ

Լուպէ, Ֆրանսայի նախագահը Ռուսիոյ Զարէն նամակ մը ընդուներ է որով Ռուսիա կը հրաւիրուի. Մեկնելուն օրը որոշելը Լուպէի կամքին թողուած է.

անրապետական Ֆրանսան մեծ հրճուանքի մէջ է....

ԹՐԱՆՍՎԱԼ

Գերի բռնուած պօէրներ կը հաղորդեն որ Դուէթ զօրավարը թեւէն վիրաւորուած է.

— Տուէթ և Շթէյին Օրանժ կը գտնուին եղեր Պօթայի հետ խորհրդակցելու համար.

— Բարիզի „Մաթէն" թերթը կը հաւաստիացնէ թէ անգլիական կառավարութիւնը պօէր զօրավարներէն հաշտութեան բանակցութիւններ սկսելու առաջարկութիւն ընդուներ է.

ԱՄԵՐԻԿԱ

Վաշինկթընէն կը հաղորդեն որ նախագահը ընդուներ է պօէր պատգամաւորները, բայց յայտարարեր է որ Միացեալ Նահանգները չը պիտի կրնան միջամտել պատերազմը դադրեցնելու համար.

ՄԻՍ ՕԹՕՆ

--օ--

Միս Օթօն իր Սամօքօֆ գտնուած բարեկամներուն հետեւեալը կը գրէ.

«Զմեզ յափշտակողները մեզի բաւական կանոնաւոր և լաւ կերակուր կուտային, մեր ուզածին համաձայն. շնորհնակ կստանայինք անգլիական և ամերիկեան կարեւոր թերթերը. Ճաճախ կը խնդայինք անոնց մէջ մեր մասին գրուածներու վրայ. Պուլկարական թերթերէն կանոնաւորապէս կստանայինք «Վէչերնա-բօշթան», լրագիրներուն հետ միասին կանոնաւորապէս կստանայինք մեր հասցէին ուղղուած նամակները, մեր ազգականներու կողմէն գրուած.

Շատ անգամ մեզի անծանօթ նշանաւոր անձերէ յուսադրական նամակներ կստանայինք.

Ամեն նամակներուն կանոնաւորապէս կը պատասխանէինք. Գերի վիճակի մէջ մենք ազատօրէն կը կատարէինք մեր ազգային և կրօնական ծէսերը.

Ճամբորդած միջոցնուս մեզ կը հագցնէին ուլահի հաստ զգեստներ և աչքերս կը կապէին.

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

—օ—

Ով որ կը փափագի սենեկին զեղեցիկ եւ արժանավայել զարդ մը աւելցնել, թող բարեհաճի ղրկել մեր հասցէին 2.50 ֆրանկ, 1 ռուբլի կամ 50 սէնթ, փոխարէն՝ ապահովագրեալ ծրարով, կընդունի Հայոց սիրելի ՆԱՀԱՊԵՏԻ Հ. ԱԼԻՇԱՆԻ մեծադիր լուսատիպ պատկերն, յատուկ խնամքով տպուած 50էն 65 հարիւրամետր մեծութեամբ փայլուն եւ ստուար թուղթի վրայ: Գործակալաց եւ մեծաքանակ գնողաց իւրաքանչիւր տասը օրինակաց վրայ մէկ օրինակ ձրի կը ղրկուի:

Դրամը կանխիկ

ՍԻՄՈՆ ՆԱՀԱՊԵՏ եւ Ընկ.
Ս. Ժիով. Գրիսօստօմօ 5715
(Իտալիա)   Վենետիկ

Ծանօթ.—Կը փութանք յայտնելու ազնիւ ազգայնոց որ ի մօտոյ պիտի հրատարակենք նաեւ մեծադիր լուսատիպ, առաջնակարգ եւ ամենահետաքրքրական պատկեր մը, որ կը ներկայացնէ հռչակաւոր ազգային գործիչներու ժողով մը.

Նոյն պատկերին լուսատիպ քարտերն եւս կը պատրաստենք.

ՆՕԹԱՑՈՎ ԵՐԳԵՐ

—Զ—

Ֆիլիպէի Հայկ. Երգեցիկ խումբը պատրաստ ունի հետեւեալ քառաձայն երգերը.

«Մեր Հայրենիք», «Մայր Արաքսի» և «Զիմզլխին փաթէն կիտամ», „Լռեց ամպերը", (Կարա Մուրզա), „Ի մարտ—բաւ է որքան", «Վրէժ—Թող կործչին», մէկական երես 15 սանթիմ.

«Արիք Հայկազունք», «Ես լըսեցի մի անուշ ձայն», և «Օյնաղան»—ժողովրդական պարերգ— (Կարա Մուրզա) երկուքական երես 30 սանթիմ.

«Ռազմերգ—Հայ եղբայրները» 3 երես 45 սանթիմ.

„Գնացէք տեսէք ո՞վ է կերել չէծ„ և „Լեփօ լէ լէ"—ժողովրդական պարերգ—(Կարա Մուրզա) „Կախաղան—բերին աթոռ ելաւ" 4ական երես 60ական սանթիմ.

Արտասահմանի համար մէկ երեսը 20 սանթիմ.

Ֆիլիպէ Հայկ. Երգ.—քարտ. խումբ Հասցէ

Ցակոբ Սրվաճեան
(Ֆիլիպօբոլ)

Отговорникъ :
Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность" — Варна